ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/94

Բողոքի ներկայացման ամսաթիվը՝ 01.10.2021թ.

Շտկված բողոքի ամսաթիվը՝ 06.10.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Առկտուր» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21» գնանշման հարցում

Գնման առարկան՝ «Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գույքի կահավորման ապրանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ չեղյալ համարել ընթացակարգը կամ վերագնահատել մրցույթի արդյունքները՝ բոլոր մասնակիցների ներկայությամբ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ա ՌԿՏ ՈՒՐ

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հասցե՝ Երևան, Կոմիտասի 1/253, ՀՎՀՀ 00056517, հեռ. 22-97-92, Ինեիդ բանկ ՓԲԸ 20500-2208671

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք

Առկտուր ՍՊԸ-ն / հվհհ 00056517/ ներկայացնում է բողոք ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի թիվ ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21 ծածկագրով ընթացակարգի կապակցությամբ:

- ***Բողոքը ներկայացված անձի անվանումը***

  <<Առկտուր>> ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Սաֆարյանի / անձնագիր AT 0355688, տրված 004-ի կողմից 15.01.2020թ

- ***Պատվիրատու***

  ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարան

- ***Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան***

  «Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գույքի կահավորման ապրանքների մատակարարում ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21

- ***Վեճի առարկան***---*Առկտուր* ՍՊԸ-ն, ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու համար, Քանաքեռավանի համայնքապետարանի հասցեով 24.09.2021թ.-ին փոստային առաքմամբ իրականացրել է գնանշման ընթացակարգի իր մասնակցության փաթեթի առաքումը: Մրցույթի փաթեթների բացումը պետք է տեղի ունենար 29.09.2021թ ժամը 12:00-ին: Ըստ Հայփոստ ՓԲԸ-ի տվյալների մեր փծաթեթը հանձնվել է պատվիրատուին 29.09.2012թ. ժամը 11:59-ին: Այդ է վկայում նաև 01.10.2021 11:06:58-ին հրապարակված թիվ 2 արձանագրությունը,որում հանձնաժողովը ֆիքսում է,որ ժամը 11:59-ին մեր փաթեթը հանձնվել է համայնքապետարանին: Արդյունքում Առկտուր ՍՊԸ -ի փաթեթը չի գրանցվել , չի բացվել և ընկերությանը չի տրվել հնարավորություն մասնակցել մրցույթի ընթացակարգին:

  Սույնով բողոքում ենք նշված ընթացակարգի հանձնաժողովի գործողությունները և պահանջում չեղյալ համարել ընթացակարգը կամ վերագնահատել մրցույթի արդյունքները՝ բոլոր մասնակիցների ներկայությամբ:

պատվիրատուի անվանումը և հասցեն--- ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք, փ.13, 4-րդ նրբանցք, շենք 2

- **Բողոքի փաստացի ապացույցները / կցվում են**

1 . Հայփոստ ՓԲԸ-ի 24.09.2021թ. թիվ՝DLEO100285606AM կոդով ստացականը

2. Հայփոստ ՓԲԸ-ի թիվ՝DLEO100285606AM կոդով առաքանու մանրամասները արտատպված www.haypost.am կայքից

3. ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կարիքների համար *ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21* ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի Արձանագրություն 2 /էջ1 /

- *Ներկայցվում են հետևյալ փաստաթղթերի պատճենները*

1 . Հայփոստ ՓԲԸ-ի 24.09.2021թ. թիվ՝DLEO100285606AM կոդով ստացականը

2. Հայփոստ ՓԲԸ-ի թիվ՝DLEO100285606AM կոդով առաքանու մանրամասները արտատպված www.haypost.am կայքից

3. ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կարիքների համար *ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21* ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի Արձանագրություն 2 /էջ1 /

4. բողոքարկման 30.000 դրամ վճարի վճարման թիվ 1153 գործառնության հանձնարարականի պատճեն

Բողոքի իրավական հիմքերը---- ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ N 526 որոշման համաձայն գնումների գործընթացի բողոքարկման / հոդված 46 , 1 և 3 կետեր / համաձայն խախտվել է Առկտուր ՍՊԸ-ի իրավունքները որի հետևանքով կազմակերպությանը հասցվե է խախտվել է

SAFARYAN ARMEN 1501590898

Digitally signed by SAFARYAN ARMEN 1501590898
DN: c=AM, sn=••••••••, givenName=•••••, serialNumber=254a233644d5, cn=SAFARYAN ARMEN 1501590898
Date: 2021.10.06 11:52:02 +04'00'

Հարգանքով՝ Առկտուր ՍՊԸ
Տնօրեն՝ Արմեն Սաֆարյան
Հեռ ./010/ 26-84-80
/ 091 /41-61-54

Մասնակցի անվանումը (անունը) (կնիքների պարագայում Անուն Ազգանուն) (ստորագրություն)